ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2014թ. հուլիսի 9

թիվ 67- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Դավթաշենի Աթ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2014 թվականի հունիսի 28-ի թիվ 5 նիստի արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության խորհուրդների կազմը հաստատելու մասին>> թիվ 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Թալինի տարածաշրջանի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) << Դավթաշենի Աթ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<Հերմինե Հովհաննիսյան>> և << Անդրանիկ Հեպոյան>> բառերը համապատասխանաբար փոխարինել <<Թամարա Մարտիրոսյան>> և <<Լևոն Գրիգորյան>> բառերով:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ